


Արսի



Փոքրիկ Հերոս

891.99Մ
Ա-82

Բեռնի Պատմություն

ՊԵՏՅՐԱՏ

891.99U-
Ա-82

30 MAY 1911

48.

Ա Ր Ա Ջ Ի

ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍԸ

ՔԵՌՈՒ ՊԱՏՄԱԾԸ


Շապիկը՝ ՀՐ. ՌՈՒԽԿՅԱՆԻ
Նկարները՝ Վ. ԳԱՅՖԵՃՅԱՆԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1937

21.02.2013

7163

Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբազրիչ՝ Ա. Արգախանյան



2733
40

Հրատ: 4081, Գլ. լրագ.— 4673, Պատվեր 725, Տիրաժ 4000

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի, 65

Փ Ո Ք Ր Ի Կ Ն Ե Ր Ո Ս Ը

(ՔԵՆՈՒ ՊԱՏՄԱԾԸ)

Ցարի ժամանակն էր:

Հայրս բանվոր էր Թբիլիսիի մեծ կաշեգործարանում: Նա հեղափոխական էր և իր ընկերների հետ կոմուն էր ցարական իշխանության դեմ:

Մի յերեկո մեր տանը ժողով էր: Յես անհամբեր սպասում էյի,—չատ էյի հետաքրքրվում, թե ո՞վքեր են գալու: Յերբ մայրիկիս հարցրի, թե ինչ են անելու այդ ժողովում, նա դեմքը խոժոռեց ու ասաց.

— Սո՛ւս, վոչ վոքի բան չասես. կմեծանաս, ամեն ինչ կիմանաս:

Յերեկոյան յեկան մեզ մոտ հինգ հոգի: Նրանց մեջն էյին՝ Դանիելը, Արամը, վրացի բանվորներ՝ Արչիլն ու Նրաստեն և ռուս՝ Պավելը: Ժողովը մեր յերկրորդ սենյակումն էր, դուռն էլ, իհարկե, հայրիկս փակեց:

Յես նստել էյի առաջին սենյակում և դաս էյի սովորում, բայց ուշքս դուրս կողմն էր. — ա՛խ ի՞նչպես կուզեյի յես ել լինեյի ժողովում ու լսեյի՝ ի՞նչ են խոսում բանվորները:

Մեր սենյակում խորը լռություն էյինք պահպանում: Մայրըս թեյի պատրաստություն էր տեսնում սամավարի մոտ, իսկ քույրս զբաղված էր իր ձեռագործով:

Հանկարծ հայրիկս դուռը բացեց ու մոտեցավ ինձ.

— Գա՛գիկ, — ասաց, — դու գնա՛, կանգնիր մեր փողոցի անկյունում ու մի լավ աչք ածա. յեթե տեսնես վոստիկաններ են գալիս, կվազես ինձ իմաց կանես:

Հայրս բացատրեց, թե ի՞նչպես պիտի կատարեյի այդ ամենը: Յես դուրս յեկա մեր նեղ փողոցը, հասա մինչև անկյունը ու սկսեցի դիտել: Չափազանց ուրախ էյի, վոր հայրս ինձ այդպիսի դադանի գործ է հանձնել. այնքան ուրախ էյի, վոր ցուրտը չեյի զգում:

Մոտ կես ժամ դանդաղ հետ ու առաջ քայլելուց հետո, մեկ ել տեսնեմ՝ մեր կողմն են գալիս յերկու վոստիկան: Նրանց նկատելուն պես իսկույն արագ քայլեցի դեպի տուն, իսկ փոքր ինչ հեռանալով՝ սկսեցի վազել. ծախ նման թռա, ներս ընկա



բնակարանը, մոտեցա ժողովի սենյակի դռան, թխկացրի:
Հայրս դուրս նայեց:

— Հայրիկ, վոստիկաններ են գալիս—ասացի յես հեվիհե:
Իսկույն բոլոր բանվորները վեր թռան տեղներից ու դուրս
գնացին մեր տան յետեվի կողմից: Մեր տան յետևը մի անմար-
դաբնակ ձորակ էր. այնտեղ իջնելով կարելի յեր ցրվել ամեն
կողմի վրա:

Հայրս շտապելով հանեց պահարանից ինչ վոր թղթեր,
լցրեց գրպաններն ու գնաց նույն ճանապարհով:

Հենց նոր եր հայրիկս դուրս յեկել տնից, մեր դուռը բակի
կողմից պինդ թռխկացրին: Մայրիկս սաստիկ դռնատվեց, իսկ
քույրս վախից ձեռագործը վայր ձգեց:

Դուռը բացվելուն պես ներս ընկան սենյակ յերկու վոստի-
կան. — մեկը թաղային վոստիկանն էր, մյուսը՝ նրա ողնականը:
Նրանք կոպիտ ձայնով հարցրին հայրիկիս անունն ու ազգանունը
և սկսեցին խուզարկել մեր բնակարանը, մեկը՝ առաջին սենյա-
կում, մյուսը՝ յերկրորդ:

Յես հետաքրքրութունից պնացի թաղային վոստիկանի
յետևից ժողովի սենյակը. յերևում եր՝ նա շատ եր հետաքր-
քրվում. մեր պահարանով, վորովհետև մտնելուն պես սկսեց
դուրս քաշել պահարանի արկղները:

Յես անցա պատուհանի կողմն ու հանկարծ նկատեցի փեղկի
յետևիւր թղթերի մի կապոց: «Յերևի հայրիկն է մոռացել» —
մտածեցի յես ու իսկույն վերցրի, դրի ծոցս: Վոստիկանը չնը-
կատեց, նա զբաղված եր պահարանով. — կուցել եր ու փորձում
եր դուրս քաշել ներքևի արկղը, կարծելով թե այնտեղ
շատ բաներ կան թաղնված:

Յես մտածում եյի՝ «յերևի ծոցիս թղթերը վտանգավոր են,
պետք է թաղցնել վոստիկաններից», բայց չգիտեյի, ի՞նչպես
սնեմ այդ, մնա՞մ այս սենյակում, թե գնամ մայրիկիս մոտ:

Այդ ժամանակ թաղային վոստիկանը բարձրացավ ու
տեսնելով ինձ, ասաց ուռեսերեն.

— Դու լավ տղա յես հա՞: Քեզ համար մի մանկական
վելոսիպեդ կառնեմ, միայն ասա՝ վո՞րտեղ ե պահում հայրիկդ
իր գաղտնի թղթերը:

— Հայրիկս գաղտնի թղթեր չունի, — պատասխանեցի յես:
Նա աչքերը չուց վրաս ու կոպիտ ձայնով հրամայեց.

— Գնա՛, կո՛րիւր այստեղից:

Յես ել հենց այդ եյի ուզում. — դուրս յեկա մյուս սենյակը,
վորտեղ մայրիկս ու քույրս եյին: Այնտեղ մյուս վոստիկանն
արդեն տակն ու վրա յեր արել մեր բոլոր իրերը, բայց իր
փնտրած գաղտնի թղթերն ու գրքերը չեր գտել:

Յես մոտեցա այն սեղանին, վորի վրա պատրաստում եյի
դասերս, նստեցի մոտն ու վերցնելով մի դասագիրք, բաց արի
ու նայում եյի, իբր թե կարդում եմ, բայց ուշքս ուրիշ տեղ
եր... յես մտածում եյի, թե ի՞նչպես թաղցնեմ ծոցիս թղթերը:

Մի քանի րոպեյից հետո ներսի սենյակից թաղային վոստի-
կանը կանչեց իր ողնականին: Այնտեղ նա չեր կարողանում բա-
ցել մեր պահարանի ներքևի արկղը և ողնակիսն եր կանչում:



Հենց վոր վոստիկանը դուրս գնաց, յես արագ հանեցի ծոցիս կապոցն ու դրի պայուսակիս մեջ, վրան ել դարսեցի մի քանի գիրք, վորպեսզի չնկատվի:

Վոր իմանաք, ինչպես եր բաբախում սիրտս... չարունակ մտածում եյի — ահա վոստիկանը ներս կգա ու կասի՝ ապա մի բաց արա տեսնեմ ինչ կա քո պայուսակում...

Յերկար չարչարվելուց հետո, վոստիկանները վերջապես բաց արին պահարանի ներքևի արկղը, բայց այնտեղ վոչ մի արգելված բան չգտան. միայն մի քանի հին շորեր եյին, ել ուրիշ վոչինչ:

Դա նրանց շատ կատաղեցրեց. նրանք գազազած դուրս յե-

կան մեր սենյակը: Թաղային վոստիկանը մոտեցավ իմ սեղանին: Սիրտս դող ընկավ. յես կարծում եյի, թե յեկել ե պայուսակս խուզարկելու, շայց նա միայն հարցրեց իր ողնականին.

— Այտեղ նայել ե՞ս:

— Այո՛, նայել եմ, վոչինչ չկա, — պատասխանեց նա:

Հետո նրանք ինչ վոր գրեցին ու դուրս յեկան: Մենք աղատ չունչ քաշեցինք. վորքան ուրախ եյինք, վոր վոչ մի վտանգավոր բան չեն գտել:

— Իսկ գիտե՞ք, ինչ կա իմ պայուսակում — ասացի յես ու հանեցի իմ գտած կապոցը:

Մայրս ու քույրս շատ դարմացան, թե ի՞նչպես յես կարողացել եյի այդպես ճարպիկ կերպով թազցնել կապոցը, վորի մեջ հեղափոխական թուղթիկներ եյին:

Մայրիկս ուզում եր այրել թուղթիկները, վախենալով, վոր վոստիկանները նորից կարող են գալ, բայց յես չթողի:

— Մայրիկ, թող տանեմ այս կապոցը հայրիկի ընկեր Դանիելի մոտ:

Մայրս չեր ուզում, բայց վերջը համաձայնվեց: Յես վերցրի կապոցը, դրի ծոցումս ու դուրս յեկա տնից յետևի ձորակի կողմից: Մութ գիշեր եր, ճանապարհն ել զառիվայր ու ցեխոտ: Մի քանի անգամ վայր ընկա, գլորվեցի, բայց ելի գնում եյի շատ արագ, համարյա վազելով:

Այսպես չարչարվելով, քրտնած ու ցեխոտված վերջապես դուրս յեկա ձորակի մյուս ափն ու մտա մի նեղ փողոց: Մի քիչ ել անցա, — ահա և Դանիելի բնակարանը:

Դուռը ծեծեցի: Դանիելի պառավ մայրը զգուշությամբ քիչ բացեց դուռն ու հարցրեց.

— Ո՞վ ե:

— Յես եմ, Գագիկը, — ասացի ու ներս ընկա սենյակը: Տեսնեմ՝ հայրիկս ել այնտեղ ե: Այնպես եյի հուզված, վոր չեյի կարողանում խոսել. ուղղակի հանեցի ծոցիցս կապոցն ու տվի հայրիկիս:

— Վա՛յ, ես ի՞նչ միտալ ե պատահել, — ասաց նա, — ձեռքը ճակատին խփելով, այս թուղթիկները յեթե վոստիկանների ձեռքն ընկնեյին, ինձ կքչեյին շա՛տ հեռու, Սիրերից ել գենը:

Հայրս վրա ընկավ, համբուրեց ճակատս.

— Ա՛պրես, ա՛պրես Գագիկ, — ասաց նա, — դու այսոր իսկական հերոս ես:

Հետո մոտեցավ Դանիելը, նույնպես համբուրեց ճակատս. այդ գեռ բավական չեր, նա կանչեց իր մորն ու կնոջը. նրանք ել համբուրեցին ինձ:

Հայրիկս հարցրեց թե վո՞րտեղ եմ գտել այդ կապոցը,



Հ. Հայրապետյան

հարցրեց խուզարկութեան մասին: Յետ ամեն ինչ պատմեցի: Բանից պարզվեց, Վոր հայրիկս այդ թուղթիկները տվել էր ընկեր Արամին, բայց նա յեւ դրել էր պատուհանի դռնում ու դուրս գալիս շտապելուց մոռացել էր:

Այդ գիշեր հայրիկս մնած Դանիելենց մոտ, իսկ յես վերադարձա մեր տունը: Ինձ ճանապարհ դրեց Դանիելը:

Մայրիկս ու քույրս դռան մոտ կանգնած անհանգիստ սպասում էին ինձ: Մայրիկս հարց ու վորձ արավ, ու յերբ իմացավ, Վոր ամեն ինչ լավ է անցել, նա յեւ համբուրեց ինձ... «Ո՛հ, այսքան եւ համբուրել կլինի», — մտածում էյի յես: Այնքան ուրախ էյի Վոր իսկի չեյի ուզում քնել...

Դա իմ առաջին հեղափոխական դորձն էր...



31

✓

7163

ԳՆԵԸ 50 ԿՈՊ

ԱՐԱՅԻ
МАЛЕНЬКИЙ ГЕРОЙ
ГИЗ. АРМ. С.С.Р. ЕРЕВАН